

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ**

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
խմբագրական խորհուրդ՝

Արման Եղիազարյան (խմբագիր, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Զուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Арман Егиазарян (редактор, д.и.н., проф.), **Арам Симонян** (директор Института Арменологических исследований ЕГУ, членкор. АН РА, д.и.н., проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Айрапет Маргарян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсисян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Напетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., доц.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н.).

Editor-in-Chief - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Arman Yeghiazaryan (editor, Doctor of Sciences, prof.), **Aram Simonyan** (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, associate prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, associate prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, associate prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, associate prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Սեյրան Չաքարյան - ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԵՎ ԻՄԱՍՏԱՍԻՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	8
Сейран Закарян - ИСТОЧНИКИ ФИЛОСОФИИ ГРИГОРА ТАТЕВАЦИ, ЕГО ИДЕИ И СПЕЦИФИКА ЕГО СПОСОБА ФИЛОСОФСТВОВАНИЯ.....	16
Seyran Zakaryan - GRIGOR TATEVATSI'S PHILOSOPHICAL SOURCES, IDEAS AND PECULIARITIES OF THE WAY OF PHILOSOPHIZING.....	17
Հասմիկ Ամիրջանյան - ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՅՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԿՈՐ-ՎԱՐՉԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.....	19
Асмик Амирджанян - ДУХОВНО-АДМИНИСТРАТИВНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ГУКАСА КАРНЕЦИ.....	27
Hasmik Amirjanyan - ADMINISTRATIVE-SPIRITUAL ACTIVITIES OF GHUKAS KARNETSI.....	28
Վարդան Միսիրջանյան, Գոհար Ղամբարյան - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ. ՍԵՎԱՆԼԱ ԼՅԻ ԱՎԱԶԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ XIX ԴԱՐԻ 30-ԱՎԱՆՆԵՐԻՆ.....	29
Вардан Мхитарян, Гоар Гамбарян - ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА: НАСЕЛЕННЫЕ ПУНКТЫ БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В 30-Х ГОДАХ XIX ВЕКА.....	39
Vardan Mkhitaryan, Gohar Ghambaryan - INFORMATION WAR: SETTLEMENTS OF THE LAKE SEVAN BASIN IN THE 30s of XIX.....	39
Լիլիթ Մակարյան - ԱՊԱՐԱՆԻ ՎԱՐԴԵՆԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԻ ԵՎԵՂԵՑԻՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԵՃՉԳՐՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐԶ.....	45
Лилит Макарян - К ВОПРОСУ О ПЕРЕСЕЛЕНИИ СЕЛА ВАРДЕНИС АПАРАНА И УТОЧНЕНИИ НАЗВАНИЙ МЕСТНЫХ ЦЕРКВЕЙ.....	49
Lilit Makaryan - ON RESETTLEMENT ISSUE OF VARDENIS VILLAGE OF APARAN AND NAME CLARIFICATION OF LOCAL CHURCHES.....	49
Ֆելիքս Մովսիսյան - ՌՈՒՄԱՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ XIX ԴԱՐԻ ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ.....	50
Феликс Мовсисян - ПЕРИОДИЧЕСКАЯ ПЕЧАТЬ РОССИЙСКИХ АРМЯН ОБ ИТАЛЬЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЕ XIX ВЕКА.....	66
Felix Movsisyan - ARMENIAN PERIODICALS OF RUSSIA ON THE 19TH CENTURY NATIONAL STRUGGLE OF ITALY.....	67
Սուսաննա Առաքելյան - ԲԱՔԿԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ԼՈՒՄԱՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՊՐՈՑԱՍՏԵՂԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1864-1896 ԹԹ.....	69

Сусанна Аракелян – ОБРАЗОВАТЕЛЬНО-ПРОСВЕТИТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОГО ГУМАНИТАРНОГО ОБЩЕСТВА БАКУ И СТРОИТЕЛЬСТВО ШКОЛ В 1864-1896.	87
Susanna Arakelyan – EDUCATIONAL AND SCHOOL-BUILDING ACTIVITIES OF ARMENIAN HUMANITARIAN SOCIETY OF BAKU IN 1864-1896.	87
Գեղամ Բաղայան – ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱԽՕՐԵԻՆ [Սևերակի, Ջերմուկի, Միդիատի, Մծբինի (Նիսիբին) և Վերանշեհիրի գավառները].....	88
Гегам Бадалян – ИСТОРИКО-НАРОДНОЕ ОПИСАНИЕ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НАКАНУНЕ ГЕНОЦИДА АРМЯН (Северакский, Джермукский, Мидиатский, Мцбинский (Нисибинский) и Вераншехирский уезды).	115
Gegham Badalyan – HISTORICAL-NATIONAL DESCRIPTION OF WESTERN ARMENIA ON THE EVE OF THE ARMENIAN GENOCIDE (provinces Severak, Jermuk, Midiat, Mtsbin (Nisibin) and Veranshehir).	115
Աննա Վարդանյան – ԴԻԱՆԱ ԱԲԳԱՐ. ՀԱՅ-ԵԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇՈՒՆՔՆԵՐԸ	117
Анна Варданян – ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.	123
Anna Vardanyan – DIANA ABGAR -“MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST”: LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS.	124
Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ 1926 Թ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ	125
Гаяне Оганнисян – НАСЕЛЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ПО ВСЕСОЮЗНОЙ ПЕРЕПИСИ 1926 г.	132
Gayane Hovhannisyan – POPULATION OF THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION ACCORDING TO THE ALL-UNION CENSUS (1926).	133
Արտակ Խաչատրյան – ԲՈՆԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻՆ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ.....	134
Артак Хачатрян – НАЦИОНАЛЬНЫЙ ВОПРОС В ВОСПРИЯТИИ БОЛЬШЕВИСТСКОЙ ПАРТИИ В ДОСОВЕТСКИЙ ПЕРИОД (1903-1917 гг.).....	141
Artak Khachatryan – NATIONAL ISSUE IN THE PERCEPTIONS OF THE BOLSHEVIK PARTY IN THE PRE-SOVIET PERIOD (1903-1917).	141
Մանյակ Երանոսյան – ՀԱԿՈՒ ԶԱՎՐԻՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ (1916 Թ. ՀՈՒՆԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)	142
Маняк Ераносян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ЯКОВА ЗАВРИЯНА В ЭРЗРУМЕ (ИЮЛЬ-СЕНТЯБРЬ 1916 Г.).....	149
Manyak Yeranosyan – НАКОВ ZAVRIYAN'S ACTIVITIES IN ERZRUM (1916 JULY-SEPTEMBER).	150

Գևորգ Կեսոյան - ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐԹԻՎ - ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....	151
Геворг Кесоян - СИТУАЦИЯ НА ГРАНИЦЕ ТУРЦИЯ-СОВЕТСКАЯ АРМЕНИЯ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ.....	159
Gevorg Kesoyan - THE SITUATION ON THE TURKISH-SOVIET ARMENIAN BORDER DURING THE GREAT PATRIOTIC WAR.....	160
Արման Սաֆարյան - ՀԱՅ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՎԱՆ-ԴՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՐԸ՝ ՄՈՒՆԻՏԻՄԵՆՏԻՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ ԲԱՎ-ՊԱՂՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....	161
Арман Сафарян - РОЛЬ ТРАДИЦИЙ АРМЯНСКОЙ ПУБЛИЦИСТИКИ В ПРОЦЕССЕ ОСВЕЩЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОЙ ПРОБЛЕМАТИКИ В МУЛЬТИМЕДИЙНОМ ПРОСТРАНСТВЕ.....	164
Arman Safaryan - THE ROLE OF ARMENIAN OPINION JOURNALISM IN THE COVERAGE OF ECOLOGICAL ISSUES IN MULTIMEDIA.....	165
Սարգիս Սկրտչեան - ՊԱՆԹԻՐՔԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՉԵՐԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԵՐԻՆ.....	166
Саргис Мкртчян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ПАНТЮРКИСТСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ИРАНЕ В КОНЦЕ XX - НАЧАЛЕ XXI ВЕКОВ.....	174
Sargis Mkrtchian - ACTIVITIES OF PAN-TURKISH ORGANIZATIONS IN IRAN AT THE END OF THE 20TH CENTURY - AT THE BEGINNING OF THE 21ST CENTURY.....	174
Սերի Նաջարյան, Հռիփսիմե Մուրադյան - ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՆՈՐՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (2001-2016թթ.).....	176
Мери Наджарян, Рипсима Мурадян - ПОЗИЦИЯ ГЕРМАНИИ В ВОПРОСЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН (2001-2016 ГГ.).....	183
Meri Najaryan, Hripsime Muradyan - GERMANY'S STAND ON THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE (2001-2016).....	184
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ / ТЕОРИЯ ИСТОРИИ / THEORY OF HISTORY	
Գևորգ Եաղարյան - ԱՆՑՅԱԼԻ ՊԱՏՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՆՊԱՐ-ՀԻՆ (ԹՈՄԱՍ ԶԱՐԼԱՅԼԸ ԵՎ ՆՐԱ «ԴԱՐՁԵԱԼ Ի ԿԵՐԱՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ՀՈՂԿԱԾԸ).....	185
Геворг Тшагарян - НА ПУТИ ИСТОРИЗАЦИИ ПРОШЛОГО (ТОМАС КАРЛЕЙЛЬ И ЕГО СТАТЬЯ «СНОВА ОБ ИСТОРИИ»).....	205
Gevorg Tshagharian - ON THE PATHWAY OF HISTORICIZATION OF THE PAST (THOMAS CARLYLE AND HIS ESSAY «ON HISTORY AGAIN»).....	206
Լիզա Քարիմյան - ՀԱՅ-ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ «ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ» ԳՈՏՈՒ Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԱ-ՖԻԴԱՆՅԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ.....	207
Лица Каримян - КОНЦЕПЦИЯ АРМЯНО-ВИЗАНТИЙСКОЙ «КОНТАКТНОЙ» ЗОНЫ В АРУТЮНОВОЙ-ФИДАНЯН.....	216

Liza Karimyan - V. ARUTYUNOVA-FIDANYAN'S CONCEPT OF ARMENIAN-BYZANTINE "CONTACT" ZONE. 217

ՀԱՎԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ֆրինա Բաբայան - ՀՈՍՏՈՒՆ (ՈՍՏԱՆ) ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2005-2006 ԹԹ.) 218

Фрина Бабаян - РЕЗУЛЬТАТЫ РАСКОПОК СРЕДНЕВЕКОВОГО ПОСЕЛЕНИЯ ХОСТУН (2005-2006 ГГ.) 222

Frina Babayan - RESULTS OF EXCAVATIONS AT THE MEDIEVAL SETTLEMENT OF HOSTUN (2005-2006 SEASONS) 223

Ռաֆիկ Նահապետյան - ԲՆԱԿԵՑՄԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅՈՑ ՄԵՉ (XIX դ. - XX դ. սկիզբ) 228

Рафик Наапетян - ТРАДИЦИОННАЯ СИСТЕМА РАССЕЛЕНИЯ АРМЯН (XIX В. - НАЧАЛО XX В.) 235

Rafik Nahapetyan - THE TRADITIONAL SYSTEM OF SETTLEMENT OF ARMENIANS (XIX CENTURY - BEGINNING OF XX CENTURY) 235

ՍՓՅՈՒՌՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Արման Եղիազարյան - ՀՅՂ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐՈՒՄ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ 237

Арман Егиазарян - ДЕЯТЕЛЬНОСТЬ АРФ ДАШНАКЦУТЮН В ДИАСПОРЕ В 1920-Е ГОДЫ И ПРОБЛЕМА СОЗЫВА ОБЩЕДИАСПОРНОГО КОНГРЕССА 247

Arman Yeghiazaryan - ACTIVITIES OF ARF DASHNAKTSUTYUN IN DIASPORA IN THE 1920S AND THE PROBLEM OF CONVENING A DIASPORA CONGRESS 248

Հայկ Մարտիրոսյան - ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ 249

Айк Мартиросян - СОТРУДНИЧЕСТВО КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ США 257

Hayk Martirosyan - COOPERATION OF THE COMMITTEE OF THE CULTURAL RELATIONS WITH ARMENIANS OF DIASPORA WITH THE ARMENIAN COMMUNITY OF THE USA 257

Էդիկ Մինասյան - ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽ-ՍՓՅՈՒՌՔ ԱՌԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԴՆԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 21-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՍՅԱԿՆԵՐՈՒՄ 259

Эдик Минасян - ДЕЯТЕЛЬНОСТЬ ВСЕАРМЯНСКИХ ФОНДОВ, ОБЩЕСТВЕННЫХ И БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ ПО УКРЕПЛЕНИЮ ОТНОШЕНИЙ АРЦАХ-ДИАСПОРА В ПЕРВЫЕ ДЕСЯТИЛЕТИЯ XXI ВЕКА 272

<i>Edik Minasyan</i> – ACTIVITIES OF THE ALL-ARMENIAN FUNDS, NGOS AND CHARITABLE ORGANIZATIONS TO STRENGTHEN ARTSAKH-DIASPORA RELATIONS IN THE FIRST DECADES OF THE 21ST CENTURY.	273
Վարեն Մկրտչյան – ԱՐՏԱԳԱՂԹԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ	274
<i>Карен Мкртчян</i> – МИГРАЦИЯ И ПРОБЛЕМЫ ОБРАЗОВАНИЯ В АРМЯНСКОЙ ОБЩИНЕ ИРАНА.	280
<i>Karen Mkrtchyan</i> – MIGRATION AND EDUCATIONAL PROBLEMS IN THE ARMENIAN COMMUNITY OF IRAN.	281
 ՄԱՆԿԱԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ / ПЕДАГОГИКА / PEDAGOGY	
Սերի Հովհաննիսյան – ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԺԵՔՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ (ծննդյան 180-ամյակի առթիվ).....	282
<i>Мери Оганнисян</i> – ЦЕННОСТНЫЕ ПОДХОДЫ К ОБРАЗОВАНИЮ ПО ГАЗАРОСУ АГАЯНУ.	289
<i>Meri Hovhannisyán</i> – VALUE-BASED APPROACHES TO EDUCATION BY GHAZAROS AGHAYAN.	289
 ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ / РЕЦЕНЗИЯ / REVIEW	
Էրիկ Գալեգիսի ՄիլաՍՅԱՆ, ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-2018 թթ.), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 380 Էջ + 16 Էջ ՆԵՐՊԻՐ:.....	291
ԲԱԶՄԱԿԱՍՏԱԿ ԱԶԳԱԳՐԱԳԵՏԻ ՆՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	293
ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ-17-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ, ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 300 Էջ:.....	295
 ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ	298
 ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ. 2020 թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԱՆՄԱՀԱՑԱԾ՝ ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՍԱՆԵՐԸ	315
 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	318
INFORMATION ABOUT THE AUTHORS	320
 Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ	322
NOTICE FOR THE AUTHORS	322

ԱՆՆԱ ՎԱՐՊԱՆՅԱՆ

ԴԻԱՆԱ ԱՐԳԱՐ. ՀԱՅ-ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Հիմնաբառեր. Դիանա Արգար, պատվավոր հյուպատոս, հայ գաղթականներ, Ճապոնիա, մարդասիրություն, ցեղասպանություն, Գրիգոր Չամոյան, Հայաստան, Էյիչի Շիբուսավա, Տոկեյ Մարու:

Գրող, հրապարակախոս, դիվանագետ Դիանա Արգարը, հիրավի, մի ուրույն կղզի է անցյալի հայ կանանց դիմաստահում՝ իր ազգանվեր գրական-հասարակական եռանդուն գործունեությամբ և անսլուզական կերպարով:

Արծվի Բախչինյան¹

Մեր օրերում Դիանա Արգարի նման եզակի, օրինակելի հայ կնոջ կերպարի հանդեպ հետաքրքրությունը չի դադարում: 2019 թ. Հայաստանում, Ճապոնիայում, Միացյալ Նահանգներում կայացան միջոցառումներ, որոնք կոչված էին արժևորելու Դիանա Արգարին և երիտասարդ սերունդներին փոխանցելու նրա կյանքի, գործունեության վերաբերյալ նոր մանրամասներ՝ մինչ վերջերս անհայտ շատերի համար: Միջոցառումները կոչված էին ընդգծելու նրա մարդասեր տեսակը և հետագիծը՝ հայ և ճապոնացի ժողովուրդների բարեկամության, պատմամշակութային, դիվանագիտական հարաբերությունների հաստատման ակունքներում լինելու և ահռելի տեղեկություններ փոխանցելու համար: 2019 թ. լրացավ Դիանա Արգարի ծննդյան 160 ամյակը, ինչի կապակցությամբ «Ոսկե ծիրան» ամենամյա կինոփառատոնի շրջանակներում կայացավ «Անպետություն դիվանագետը»² փաստագրական ֆիլմի պրեմիերան, որի գլխավոր պրոդյուսերն է Արգարի ծոռնուհի Միմի Մալայանը³: Նույն տարում Երևան քաղաքի սրտում բացվեց Դիանա Արգարի անունը կրող նորաստեղծ այգի⁴:

Նրա ծննդյան անունն էր Անահիտ, օրիորդական ազգանունը՝ Աղաբեկյան: Ծնվել է 1859 թ. հոկտեմբերի 12-ին Արևելյան Հնդկաստանի բրիտանական գաղութ Բիրմայի (այժմ՝ Մյանմա) մայրաքաղաք Ռանգունում (այժմ՝ Յանգոն): Նա սերում էր նորջուղայեցիների բարեկեցիկ ընտանիքից: Հայրը՝ առևտրական Հովհաննեսը, Աղաբեկի յոթերորդ զավակն էր⁵: Մայրը՝ Չմրուխտ Ավետումյանը, եղել է Թադեոս Խաչիկ Ավետումյանի (1810-1863 թթ.) դուստրը: Դիանա Արգարի ծնողները զբաղվել են կաթնամթերքի արտադրու-

* Հոդվածը ներկայացվել է 01.11.2020 թ., գրախոսվել՝ 04.11.2020 թ., ընդունվել տպագրության՝ 15.12.2020 թ.:

¹ Արծվի Բախչինյան, հայագետ, հայ-ճապոնական պատմամշակութային կապերի հետապոստող, թեմային նվիրված բազմաթիվ հոդվածների և մի քանի գրքերի հեղինակ:

² Հայկական «Ոսկե ծիրան» կինոփառատոնի ցանկը տես <https://armenpress.am/arm/news/979370> (մուտք՝ 21.10.2020):

³ Միմի Մալայանը Դիանա Արգարի ծոռնուհին է. նա պաշտոնապես մեծ տատիկի կյանքի և գործունեության ուսումնասիրությամբ, Արգարի ծննդյան 160 ամյակին նվիրված «Անպետություն դիվանագետը» ֆիլմի պրոդյուսերն է, «The Stateless diplomat» կայք Էջի հիմնադիրը:

⁴ Համահայկական աշխարհագրական ասոցացիայի հաղորդումը Երևանի այգիների մասին տես https://www.1tv.am/hy/video/%D4%B2%D5%A1%D6%81%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%AB%D6%80-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8-%D4%B5%D6%80%D6%87%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A1%D5%B5%D5%A3%D5%AB%D5%B6%D5%A5%D6%80/143180?fbclid=IwAR2oA7sIEJTqZ3RwK7_IIhJXN1TptZQRu4IPE2_S_0dSfsX2xCAmAes7iGg (մուտք՝ 21.10.2020):

⁵ Տես «Դիանա Արգար. կյանքը և գործունեությունը», Նոր Ջուղա, իսր. Արծվի Բախչինյանի, 2011, էջ 9:

թյամբ: Յետագայում տեղափոխվել են Կալկաթա, որտեղ էլ Անահիտը ստացել է անգլիական կրթություն կանանց մենաստանում, իսկ տանը սովորել է հայերեն գրել ու կարդալ: 1889 թ. հունիսի 18-ին Յոնկոնգում ամուսնացել է ծնունդով ևորջուղայեցի վաճառական Միքայել Աբգարյանի (Մայքլ Աբգար) հետ, ով զբաղվում էր մետաքսի վաճառքով Յոնկոնգում-Ճապոնիա ծովային երթուղիով: Այս հանգամանքն էլ դրական իմաստով ճակատագրական է եղել. ևորայասակներն իրենց մեղրամիսն անցկացրել են Ճապոնիայում: Այս ճանապարհորդությունից տպավորված՝ նրանք որոշում են մշտական բնակություն հաստատել Ճապոնիայի Նավահանգստային Կոբե քաղաքում և հիմնել «Ա.Ս. Աբգար» առևտրական ընկերությունը, զբաղվել Յոնկոնգում ճապոնիա և Ճապոնիայից Յոնկոնգում ներմուծման և արտահանման գործով, ինչպես նաև բացել «Մեծ Արևելյան» (Great Eastern) հյուրանոցը¹: Դիանա և Միքայել Աբգարյաններն ունեցել են հինգ զավակ, որոնցից երկուսը մահացել են վաղ հասակում: 1906 թ.՝ Մայքլ Աբգարի անակնկալ մահից հետո, Դիանան շարունակել է ամուսնու գործը և իր ուսերին կրել անչափահաս զավակներին միայնակ դաստիարակելու հոգսը:

Ստորև հարկ ենք համարում ներկայացնել մի կարևոր դրվագ նրա կենսագրությանը, ինչը բոլորովին վերջերս ենք բացահայտել: Խոսքը վերաբերում է 1922 թ. Չմյուռնիայի ջարդերի ժամանակ տեղի ունեցած իրողություններին և դրանց հետագա ընթացքին: Ճապոնական «Տոկեի Մարու» առևտրական Նավի ի թիվս այլ Նավերի, այդ օրերին խարիսխ էր գցել Չմյուռնիայի Նավահանգստում: Նավի անձնակազմը, ականատես լինելով, թե ինչպես են քրիստոնյաները փախչում և անհույս նետվում ծովը, չի ենթարկվել Քեմալ Աթաթուրքի զորքի հրամաններին՝ լքելու Նավահանգիստը: Ավելին, ճապոնական Նավի Նավապետը խիզախել է և Նավի տախտակամած է ընդունել ցեղասպանությունից մազապուրծ եղած հայերին ու հույներին և տեղափոխելով՝ իջեցրել հունական ափեր: Որպեսզի ավելի շատ մարդու հնարավոր լիներ փրկել, ճապոնացի Նավապետը ծովն է նետել իր Նավի թանկարժեք ուղեբեռը: Այդ օրերին տեղի ունեցած այդ մարդասիրական դրվագի մասին մեզ տեղեկություններ են հասել նաև շնորհիվ երաժիշտ Ռուբեն Կարախանյանի հուշերի, ով 1930-ականներին առիթ է ունեցել հանդիպելու քաջ Նավապետին Ճապոնիայում²: Ըստ Ռ. Կարախանյանի՝ հանդիպումը կազմակերպել է Դիանա Աբգարը: Ռուբեն Կարախանյանի հուշերը Դիանա Աբգարի հետ հանդիպման մասին ամենևին անսպասելի չէին մեզ համար, քանի որ այդ տարիներին բոլոր այն հայերը, ովքեր այցելում էին Ճապոնիա, անպայմանորեն հանդիպում էին Աբգարին: Սակայն մինչ այդ հուշերն ընթերցելը որևէ հետազոտության մեջ չէինք հանդիպել վկայություններ առ այն, որ Աբգարն ու «Տոկեի Մարու» Նավի Նավապետը ծանոթ են եղել: Կարծում ենք, որ պատճառը տարբերիվել է: 1935 թ. Աբգարն արդեն պատկառելի տարիքում էր, կյանքի մայրամուտին՝ նա ակտիվ չի եղել գրական, հասարակական, քաղաքական կյանքում: Ուստի ենթադրում ենք, որ այդ տարիներին ուղղակի չեն գրառվել հուշեր կամ գուցե դեռ չեն հայտնաբերվել այդ գրառումները: Դիանա Աբգարի ծոռնուհի Միմի Մալայանը քաջատեղյակ է իր մեծ տատիկի կենսագրությանն առնչվող մանրամասներին, ուստի նրա հետ ունեցանք մասնավոր զրույց, որտեղ հարցերից մեկին՝ արդյո՞ք տեղյակ է ճապոնացի Նավապետի և Դիանա Աբգարի մտերմության մասին, պատասխանեց, որ առաջին անգամ է լսում այդպիսի բան, ինչն էլ ինձ այն համոզման բերեց, որ այս փաստի վերհանումն իրապես բացահայտում կարելի է

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 9:

² «Փոքր ազգի մեծ պատմություն» տե՛ս <https://www.1tv.am/hy/video/%D4%B2%D5%A1%D6%81%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%AB%D6%80-%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%A8-%D5%93%D5%B8%D6%84%D6%80-%D5%A1%D5%A6-%D5%A3%D5%AB-%D5%B4%D5%A5%D5%AE-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82-%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/1676317fbclid=IwAR0PsA22zDo3n-V1BZ15tiRTx1-GmlAfTe1kmv7SqbypiSch2IfGjt2hXNPo> (մուտք՝ 10.12.2020):

համարել: Վստահաբար, այս հանգամանքը նոր լույս է սփռում և հորիզոններ բացում հետագա հետազոտությունների համար:

Շարունակելով ներկայացնել Դիանա Աբգարի կյանքի և գործունեության մանրամասները՝ հարկ ենք համարում նշել, որ, չնայած իր կյանքի ընթացքում ունեցած բոլոր դժվարություններին, նա երբեք չի ընկճվել և չի դադարել աշխատել և կատարելագործվել, լինել ներկայանալի իր գաղափարներով և աշխարհայացքով: Այդ տարիներին նա այն բացառիկ կանանցից էր, ով կարծրատիպեր է կոտրել, զբաղվել ոչ միայն ընտանեկան գործերով՝ կրելով մեծ պատասխանատվություն, այլև լինելով ուսյալ, տիրապետել է միջազգային իրավիճակին, կատարել աշխարհաբաղաբանական իրավիճակի վերաբերյալ վերլուծություններ, կանխատեսումներ, ինչն ավելի հետաքրքրական է դարձնում նրա կերպարը: Ժամանակակիցների վկայությամբ՝ Դիանա Աբգարը եղել է զարգացած, քաղաքականապես տեղեկացված, գթառատ, կրոնասեր, հավասարակշռված բնավորության տեր անձնավորություն: Ունեցել է տպավորիչ արտաքին: Հայերենից և անգլերենից բացի տիրապետել է հիևդի լեզվին և ճապոներենին¹:

Ճապոնիայում ապրելու տարիներին Դիանա Աբգարն իր մեջ բացահայտել է ստեղծագործելու տաղանդ և սկսել է գրել գրական ստեղծագործություններ: Կոբեում հրատարակել է իր առաջին «Սյուզան» (“Susan”) վեպը², այնուհետև «Պատերազմի տնային պատմություններ» (“Home Stories of the War”) վեպը՝ նվիրված ճապոնացիներին³:

Հայոց ցեղասպանության տարիներին Աբգարը, հազարավոր կիլոմետրեր հեռու պատմական հայրենիքից, երբևէ եղած չլինելով այնտեղ, մեծ ցավ է ապրել սեփական ժողովրդի ճակատագրի և ապագայի համար: Ահռելի հեռավորությունը նրան ստիպել է ապավինել միայն սեփական գրչին՝ այդ կերպ փորձելով որևէ ձևով օգնել սեփական ժողովրդին: Լիովին ծանոթ միջազգային իրավիճակին՝ 1909 թ. Ադանայի ջարդերից հետո նա սկսել է գրել հոդվածներ, թղթակցել անգլալեզու և ճապոնալեզու մամուլին⁴:

Վստահորեն կարելի է փաստել, որ այդ տարիների նրա հրապարակումները մեծապես նպաստել են հայկական հարցի միջազգայնացմանը: Աբգարն նաև ունեցել է նամակագրական կապեր այդ ժամանակների ազդեցիկ մարդկանց հետ: Պահպանվել են բազմաթիվ նամակներ, որոնցից մեր ուշադրությունը գրավեց այն մեկը, որն ուղղված էր ԱՄՆ Նախագահ Վուդրո Վիլսոնին⁵: Այն հանգամանքը, որ նախորդ դարասկզբին ճապոնիայում բնակվող օտարազգի կիևը այսչափ համարձակությամբ կարողացել է լսելի դարձնել իր ձայնը ԱՄՆ Նախագահին և այլ բարձրաստիճան պաշտոնյաների, բարձրացնել սեփական ժողովրդին առնչվող խնդիրներ ու մտահոգություններ, թույլ է տալիս մեզ կարևոր հետևություններ կատարել⁶: Մեր կարծիքով, ԱՄՆ Նախագահին, ինչպես նաև այլ բարձրաստիճան պաշտոնյաներին հասցեագրված նամակներում Դիանա Աբգարի փոխանցած տեղեկություններն ու մտահոգությունները ունեցել են իրենց մեծ ներդրումը Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի հարցում⁷: Այս պարագայում, կարելի է ասել, որ Դիանա Աբգարին հաջողվել է

¹ Տե՛ս «Դիանա Աբգար. կյանքը և գործունեությունը», էջ 23 :

² Տե՛ս “The Stateless Diplomat”, official website of Diana Apar, <https://dianaapcar.org/dianas-writings/books> (մուտք՝ 21.10.2020):

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս “The Stateless Diplomat”, official website of Diana Abgar, <https://dianaapcar.org/dianas-writings/articles/> (մուտք՝ 21.10.2020):

⁵ Տե՛ս “The Stateless Diplomat”, op. cit., <https://dianaapcar.org/documents-2/> (մուտք՝ 21.10.2020):

⁶ Հեղինակի կողմից առաջ բերվող թեպի թերևս նորույթ է:

⁷ Տե՛ս “Arbitral Award of the President of the United States of America Woodrow Wilson”, full report of the committee upon the arbitration of the boundary between Turkey and Armenia, Washington, November 22nd, 1920, prepared with an introduction by Ara Papiian, <http://www.armeniangenocidereparations.info/wp-content/uploads/2014/09/Arbitral-Award-Of-The-Presidnet-Of-The-United-States-Of-America-Woodrow-Wilson.pdf> (մուտք՝ 22.10.2020):

մասնակիցը լինել մեծ քաղաքականությանն առնչվող խմորումների: Վերոնշյալ փաստաթուղթն, ըստ պատմաբանների, չի կարելի «մեռած» համարել¹: Փաստաթղթում ներառված շատ կետերին վերաբերող հարցադրումներ այսօր էլ արդիական են և չի բացառվում, որ կյանքի կոչվեն բարենպաստ միջազգային դրություն ստեղծվելու պայմաններում:

Դիանա Աբգարի այդ տարիների հրապարակումներից դիտարժան են հետևյալները. «Դավաճանված Հայաստան» (“Betrayed Armenia”)², «Նրա անունով» (“In His Name”)³, «Խաղաղության խնդիրը» (“The Peace Problem”)⁴, «Մեծ չարիքը» (“Great Evil”)⁵, «Եվրոպայի իմպերիալիզմի խաչին խաչված Հայաստանը» (“On the Cross of Europe’s Imperialism, Armenia Crucified”)⁶:

Երբ 1919 թ.-ի հունիսի 30-ին Յեռավոր Արևելքում Ալեքսանդր Կոլչակի (1874-1920 թթ.) հռչակած հանրապետությունը ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը, այդ երկրում որպես Հայաստանի ներկայացուցիչ ուղարկվեց իրավաբան, Իրկուսկի «Վեստնիկ Արմենիի» («Հայաստանի լրաբեր») թերթի հրատարակիչ Գրիգոր Ձամոյանը⁷:

Իրադարձությունները հաջորդել են մեկը մյուսին, և գրեթե զուգահեռաբար՝ 1919 թ. մայիսի 20-ից սկսած՝ մոտ մեկ ամիս շարունակ, Հարբինում (Խարբին) կայացել է Սիբիրի և Ծայրագույն Արևելքի հայերի առաջին համագումարը՝ միավորելով այդ տարածաշրջանում միմյանցից անջատ գործող հայկական կազմակերպությունները և անհատներին: Համագումարի պատվավոր նախագահ է ընտրվել ճապոնիայում բնակվող գործարար տիկին Դիանա Աբգարը: Համագումարի օրակարգի գլխավոր հարցը եղել է մայր հայրենիքին և հայ ժողովրդին շուտափույթ օգնություն հասցնելը. այդ նպատակով կատարվել է հանգանակություն, սակայն, ինչ-ինչ պատճառներով չի հասել Հայաստան և ծրագիրը ձախողվել է:

Համագումարի օրակարգի գլխավոր կետերն էին՝

- Նյութական և բարոյական օգնություն նորաստեղծ Հայաստանի

Հանրապետությանը,

- վերադարձ հայրենիք,
- ազգային լեգեոնի կազմություն,
- կենտրոնական վարչության կազմություն,
- մարդահամար և այլն⁸:

Պատմաբան Գ. Պետրոսյանն այս հարցի շուրջ եզրահանգում է, որ Սիբիրի և Յեռավոր Արևելքի հետ առնչությունները չտվեցին անհրաժեշտ արդյունքներ, քանի որ իրադարձությունների զարգացումների ընթացքը բարենպաստ չդասավորվեցին հայ ժողովրդի համար: Սակայն կարևոր էր հայ գաղութի հետ կապերի հաստատումը և նրա աշխուժացումը⁹:

¹ THE ARBITRAL AWARD ON TURKISH-ARMENIAN BOUNDARY BY PRESIDENT OF THE USA WOODROW WILSON (NOV. 22, 1920), Papian A.A. <http://www.fundamentalarmenology.am/datas/pdfs/69.pdf> (մուտք՝ 21.10.2020):

² St’u Diana Abgar, Betrayed Armenia, “Japan Gazette”, Yokohama, 1910, https://vk.com/wall-394311720_801?fbclid=IwAR29DGQERtP0evMwziip3BVarjYBP9jclq_m4hlU8yGuprIMG-3aneuAG-E (մուտք՝ 21.10.2020):

³ St’u Diana Abgar, In His Name, “Japan Gazette”, Yokohama, 1911, https://vk.com/wall394311720_799?fbclid=IwAR1C-9hJx5Ts8BL649fm_x0lu_-q2IVcmmXpDUmLN6AjzWQGV01DBGWwvx0 (մուտք՝ 21.10.2020):

⁴ St’u Diana Abgar, The Peace Problem, “Japan Gazette”, Yokohama, 1912.

⁵ St’u Diana Abgar, Great Evil, Yokohama, 1914.

⁶ St’u Diana Abgar, On the Cross of Europe’s Imperialism, Armenia Crucified, Yokohama, 1918.

⁷ St’u Պետրոսյան Գ., ՀՀ հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1929 թթ.), Ե., ԵՊՀ, 2011, էջ 282-286:

⁸ St’u Բախչիկյան Ա., Հայերը Չինաստանում: Հայ-չինական պատմամշակութային կապերը, Ե., 2017, էջ 125-133:

⁹ St’u Պետրոսյան Գ., ՀՀ հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918-1929 թթ.), Ե., 2011, էջ 286:

Բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել Հայաստանի ազգային արխիվում Դիանա Աբգարին ճապոնիայում Հայաստանի պատվավոր հյուպատոս նշանակելու մասին, սակայն միայն վերջերս են գտնվել տեղեկություններ, թե ով է փոխանցել տեղեկություններ իր և ընտանիքի մասին Հայաստանի նորաստեղծ կառավարությանը: Ուշագրավ է, որ պատվիրակ Գրիգոր Ձամոյանի (Ձամոն)¹ միջոցով է, որ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության կառավարության ղեկավար կազմը տեղեկություններ է ստացել Յեռավոր Արևելքում Դիանա Աբգարի, նրա ամուսնու գործունեության վերաբերյալ: 1920 թ. գարնանը՝ մինչ հայրենիք վերադառնալը, Ձամոյանի վերջին հանգրվանը եղավ ճապոնիան: Նա այցելել է Տոկիո, Յոկոհամա և Կոբե քաղաքներ, որտեղ էլ հյուրընկալվել է Դիանա Աբգարին և իր ընտանիքին, ինչպես նաև ճապոնիայում առևտրով զբաղվող հայերին: Ձամոյանը գրել է. «Արևելքում Դիանա Աբգարը հայանպաստ մեծ գործ է անում: Նրա անհատականությունն արժանի է մեր ամենալուրջ ուշադրությանը»²: Դիանա Աբգարը Ձամոյանին խնդրել էր ՀՀ կառավարությանը փոխանցել հանրապետության եռագույնը խորհրդանշող 300 մետաքայա փոթրիկ դրոշակ³:

1920 թ. հուլիսի 21-ին ՀՀ վարչապետ և արտաքին գործերի նախարար Համո Օհանջանյանը Դիանա Աբգարին նշանակեց ճապոնիայում ՀՀ պատվավոր հյուպատոս: Հուլիսի վերջին դիվանագիտական առաքելությամբ ճապոնիա մեկնող Գորոյանին հանձնարարվեց Դիանա Աբգարին հանձնել Համո Օհանջանյանի նամակը և հուլիսի 23-ին ստորագրված հավատարմագիրը⁴: Վարչապետ Օհանջանյանը գրում է. «Ինձ լաւ յայտնի է, որ ծայրագոյն Արեւելքում ոչ ոք չի գործել այնքան, որքան Դուք, մեր նորածին Հայրենիքի շահերը պաշտպանելու եւ մեր հայրենակիցների ծանր վիճակը թեթեւացնելու համար: Նոյնպէս ինձ յայտնի է, որ այդ հեռու վայրերում ոչ մի հայ չունի այնքան մեծ հեղինակութիւն տեղացիների եւ մեր հայրենակիցների մօտ, ինչպէս Դուք, ուստի ես Ձեզ նշանակում եմ Հայաստանի պատուաւոր Յիւպատոս ճապօնում յօգուտ մեր երիտասարդ Հայրենիքին:

Սրա հետ միասին ուղարկում եմ Ձեզ համապատասխան հաւատարմագիր. վստահ եմ, որ ճապօնական Կառավարութեան կողմից ոչ մի արգելք չէք հանդիպիլ ստանալու անհրաժեշտ «exequatur»»⁵:

Մինչ օրս իրարամերժ կարծիքներ են հնչում, թե արդյո՞ք ճապոնիայի կառավարությունը ճանաչել է Հայաստանը որպես նորանկախ պետություն, արդյո՞ք ընդունել է Դիանա Աբգարի էկզեկվատուրան: Այս հարցերի վերաբերյալ պաշտոնական տեղեկություններ չկան, սակայն շրջանառվում են հետևյալ երկու վարկածները: Առաջինը, որ ճապոնիան չի ընդունել Դիանա Աբգարի էկզեկվատուրան, քանի որ չի ճանաչել Հայաստանը իբրև նորանկախ պետություն, երկրորդը՝ ճապոնայի կառավարությունը չի հասցրել ընդունել Դիանա Աբգարի էկզեկվատուրան, քանի որ այդ ժամանակ արդեն Հայաստանը կորցրել է իր պետականությունը:

Դիանա Աբգարը եղել է փրկության կամուրջ հարյուրավոր հայ գաղթականների համար: Նրա կենսագիր, ծոռնուհի Միմի Մալայանն իր պաշտոնական կայքում զետեղել է Աբգարի ժամանակակիցներից մեկի հուշերը, որտեղ հիշատակվում է այն մասին, որ

¹ Գրիգոր Սարգսի Ձամոյան (Գրիգոր Սերգեյի Ձամոն, 1865, Թիֆլիս - 1937, Սանդարմոխ, Կարեյիա) եղել է իրավաբան, ՀՅԴ անդամ: Առաջին աշխարհամարտի տարիներին Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը (ԿՅԲԸ) նրան գործուղել է ռուսական պորթի կողմից Արևմտյան Հայաստանի գրավված բնակավայրերում հայ բնակչությանն օգնելու: 1916 թ. եղել է ԿՅԲԸ-ին կից Հայկական կենտրոնական կոմիտեի լիապորը: 1917 թ. եղել է Կարսի շրջանի կոմիսար, 1918 թ. նշանակվել է Հայաստանի լիապոր դեսպան Ուկրաինայում: 1934 թ. ձերբակալվել է, հաջորդ տարի դատապարտվել հինգ տարի ապստամբության, տարվել Կարեյիա, որտեղ 1937 թ. գնդակահարվել է: Հետմահու արդարացվել է 1989 թ.:

² Հայաստանի ազգային արխիվ, Պետական ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 618, էջ 177:

³ Տէ՛ս Պետրոսյան Գ., նշվ. աշխ., էջ 282-286:

⁴ Այդ փաստաթղթերը պատրաստվել են ուղարկել 1920 թ. հուլիսի 21-ին Երևանից ճապոնիա մեկնող Գորոյանի միջոցով: Տէ՛ս Պետրոսյան Գ., նշվ. աշխ., էջ 282-286

⁵ Տէ՛ս ՀԱԱ, Պետական ֆոնդ 200, ց. 1, գ. 610, թ. 2-3:

Աբգարի առևտրային ընկերությունը տրամադրված է եղել նրա կողմից որպես հայ փախստականների համար դիվանագիտական առաքելության գրասենյակ, իսկ նրա տունը՝ ժամանակավոր կացարան վերջիններիս համար: Նրա միջնորդությամբ ինչպես ճապոնական իշխանությունները, այնպես էլ եվրոպացի հյուպատոսները, հայ փախստականներին անցազրեր են բաժանել: Տեղի ուստիկանության մոտ նրա խոսքը եղել է ծանրակշիռ: Հայերի հետ ինչ-որ թյուրիմացություն լինելու դեպքում դիմել են տիկին Աբգարին և նա՝ իր խոսքով, բարոյական ազդեցությամբ, նյութական միջոցներով, աջակցել է նրանց: Նշվում է նաև, որ հեռավոր Արևելքում տիկին Աբգարը դարձել էր մի անհատ, ով օգնում էր ծանր վիճակում հայտնված ցանկացած հայի, ովքեր ոչ լեզու գիտեին, ոչ տեղական ավանդույթներ: Պատահել է, որ Ամերիկայի և Անգլիայի իշխանությունների ներկայացուցիչները տիկին Աբգարի խնդրանքով հայերին օգնություն են փոխանցել, որպեսզի վերջիններս կարողանան այդ երկրներ հասնել: Հաճախ տիկին Աբգարի խնդրանքով նաև շոգենավային ընկերությունները հայերին մեծ գեղջերով տոմսեր են տրամադրել¹:

Դիանա Աբգարն օգնության ձեռք է մեկնել հայ գաղթականներին իր սեփական միջոցներով, բայց չէր հաջողի, եթե չլիներ ֆինանսական օգնություն նաև այլ բարերարներից: Այս հարցում նրան մեծապես օգնել է Վիսկոնսին Էյիչի Շիբուսավան²: Վերջինս հայտնի գործարար էր ճապոնիայում, բանկիր, դիվանագետ, բարերար, համարվել է ժամանակակից ճապոնիայի կապիտալիզմի հիմնադիրը: Շիբուսավան ղեկավարում էր Հայ օգնության ֆոնդը, ներգրավված էր նաև սոցիալական բարեկեցության, կրթության և միջազգային փոխանակման մոտ 600 կազմակերպությունների հիմնադրման գործում: Հայ օգնության ֆոնդին գումարները փոխանցվում էին ճապոնական հասարակության բոլոր շերտերից՝ սկսած հասարակ մարդկանցից մինչև կառավարության ներկայացուցիչներ, առաջատար գործարարներ և բարեգործներ: Ըստ տեղեկությունների, ճապոնական մի դպրոց ստանձնել էր երկու հայ որբ երեխաների դպրոց հաճախելու ծախսերն ու պատասխանատվությունը³: Պահպանվել է Շիբուսավանի նամակն ուղղված ճապոնիայի ազդեցիկ մարդկանց, որով ցանկացել են տեղեկություն փոխանցել և ուշադրության արժանացնել հայ գաղթականներին օգնելու հարցը⁴: Մեզ հաջողվել է ճապոնական արխիվներից վերծանել մի մատյան-փաստաթուղթ, որը նախկինում հետազոտողներին հայտնի չէր, և որտեղ մանրամասն նշվում է, թե Շիբուսավանի ղեկավարած Հայ օգնության ֆոնդից որքան գումար են տրամադրել հայ գաղթականներին ըստ ժամանակացույցի: Այդ փաստաթուղթը հնարավոր է եղել ստանալ Էյիչի Շիբուսավանի թանգարանից: Այն նոր լույս է սփռում և առավել ակնառու է ներկայացնում այն ջանքերը, որ ներդրվել են հայ գաղթականներին օգնելու հարցում⁵:

Այդ հարցում մեծ է նաև հայագետ, հայ ժողովրդի բարեկամ Հիդեհարու Նակաձիմայի դերակատարումը⁶: Նրա շնորհիվ է, որ այժմ մեզ հայտնի է Դիանա Աբգարի շիրիմի գտնվելու վայրը: Նրա գործադրած մեծ ջանքերի արդյունքում է, որ գտնվել և մեզ են փոխանցվել Աբգարի ստեղծագործությունների մեծ մասը, որոնք մինչ այժմ հայերիս համար անհայտ վայրերում էին, փոշու հաստ շերտի տակ⁷: Դիանա Աբգարի և, միևնույն ժամանակ,

¹ Տե՛ս *“The Stateless Diplomat”*, opt. cit., <https://dianaapcar.org/documents-2/near-east-relief/> (մուտք՝ 21.10.2020):

² Տե՛ս Էյիչի Շիբուսավանի անվան թանգարանի պաշտոնական կայք, <https://www.shibusawa.or.jp/english/eiichi/biography.html> (մուտք՝ 21.10.2020):

³ Տե՛ս Վիգեն Բաբկենյանի հոդվածը, <http://www.armenia.com.au/news/Feature-Articles/English/60909/Vicken-Babkenian--Japanese-helped-save-Armenians-and-Greeks-during-Genocide> (մուտք՝ 21.10.2020):

⁴ Տե՛ս «Հարցապրոյց Վիգեն Բաբկենյանի հետ», <https://www.sbs.com.au/language/english/audio/viscount-eiichi-shibusawa-and-the-armenian-relief-movement-in-japan> (մուտք՝ 21.10.2020):

⁵ Հատված վերոնշյալ փաստաթղթից, այն ներկայացված է միջին ճապոներենով, շուտով կթարգմանվի և ամբողջությամբ կիրապարակվի:

⁶ Հովհաննիսյան Ն., Ամիրխանյան Մ., Կարապետյան Ռ., Հայաստան-ճապոնիա ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևանի հումանիտար ինստիտուտ, 2005, էջ 169-178:

⁷ Տե՛ս «Դիանա Աբգար. կյանքը և գործունեությունը», էջ 36-46:

Հայոց ցեղասպանության հարցը անտեղյակ ճապոնացիներին ներկայացնելու գործում ներդրում ունեն նաև Հիրոյոշի Սեգավան¹ և Դայսակու Վատանաբեն²:

Ճապոնացի իրավաբան, միջազգայնագետ Հիրոյոսի Սեգավան «Հայերի մոռացված ցեղասպանությունը» աշխատության մեջ նշում է, որ իր երկրում հայերի մասին նյութեր գրեթե չկան, և հետևաբար ճապոնացիները հայերի նկատմամբ հետաքրքրություն չեն ցուցաբերում, իսկ Ցեղասպանության կոնվենցիան լիովին չեն ընկալում: Սեգավայի հաղորդած տեղեկությունները 2000-ականների վերաբերյալ են: Այսօր հայ-ճապոնական պատմամշակութային հարաբերությունները շատ ավելի բարձր հարթության վրա են և կայուն զարգանում են: Հետագոտող Դայսակու Վատանաբեն ծավալուն հայագիտական ուսումնասիրությունների հեղինակ է: Նրա հեղինակած «Ճապոներեն նյութեր Դիանա Աբգարի մասին»³ հոդվածը, որն ինքնուրույն գրել է հայերեն, մեզ նոր արժեքավոր փաստագրական տեղեկություններ է հաղորդում Դիանա Աբգարի ծավալած գործունեության վերաբերյալ:

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ Դիանա Աբգարը այն հայ կանանցից է, ովքեր իրենց ողջ կյանքը նվիրել են սեփական հայրենիքին և աշխարհասփյուռ ազգին աջակցելու գործին: Նրա շնորհիվ բազմաթիվ հայերի կյանքեր են փրկվել: Մեծ է նաև նրա դերը հայ-ճապոնական բարեկամական հարաբերությունների պատմության կերտման գործում:

Анна Варданян, ДИАНА АБГАР - «МАТЬ АРМЕНИИ НА ДАЛЬНЕМ ВОСТОКЕ»: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ. ПО СЛЕДАМ ИСТОКОВ АРМЯНО-ЯПОНСКИХ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ОТНОШЕНИЙ.

Диана Агабег родилась в Рангуне, Бирма, 17 октября 1859 года, и была младшей из семи детей. Ее отец иммигрировал в детстве из Новой Джульфы, а мать - из Шираза, Иран. Ее родители были индийскими армянами в первом поколении. Диана получила образование в монастырской школе в Калькутте. Она свободно говорила на армянском, английском и хинди. В 1890 году Диана Агабег Анкар переехала в Японию со своим мужем и осталась там до самой смерти.

Многое изменилось для Дианы после резни примерно 30 000 армян в 1909 году в Адане, Турция. Она начала направлять свою энергию во благо своей нации, обращая внимание на тяжелое положение армян. Изучала историю и текущие события, а также составила картину политических сил того времени и их манипуляций.

¹ Հիրոյոշի Սեգավան պատմում է, թե ինչու և ինչ պայմաններում է ուսումնասիրել Հայոց ցեղասպանության թեման. «... Դոկտորանտուրան ավարտելուց հետո երկար ժամանակ իմ հետաքրքրության կենտրոնում եղել է «Ցեղասպանության նախապայմանները» թեման: Այս հետապոտություններն իրենց նպատակին հասցնելու համար ինձ անհրաժեշտ էր կոնկրետ փաստեր բերել: Դա մոտ 20 տարի առաջ էր: Այդ ժամանակ ՄԱԿ-ի արխիվներում ուսումնասիրում էի ցեղասպանությունների հետ կապված նյութեր և հանկարծ հանդիպեցի «1915 թ. հայերի ցեղասպանությունը» վերնագրով մի նյութի... մարդկության հանդեպ պատասխանատվության պատճառով դրո՞ված, որոշեցի ինձ վրա վերցնել հայերի ապրած ողբերգության մասին անտեղյակ ճապոնացիների աչքերը բացելու պարտականությունը... շատ երկար և ոչ հարթ ճանապարհ էր...», մանրամասն տե՛ս «Հայաստան-Ճապոնիա», քաղաքական, տնտեսական, մշակութային և գիտական հարաբերություններ, գլխավոր խմբագիր՝ Նիկոլայ Յովհաննիսյան, Ե., Չանգակ-97, 2005, 156-162:

² Ճապոնացի պատմաբան, թարգմանիչ Դայսակու Վատանաբեն ուսանել է Տոկիոյի օտար լեզուների համալսարանի Ասիայի և Աֆրիկայի լեզուների ու մշակույթների ինստիտուտում: Հաճախել է հայոց լեզվի դասերի Տոկիոյում, Վենետիկում և Երևանում, Տոկիոյում դիպլոմային աշխատանք գրել «Հայ հասարակությունը Րաֆֆու «Խենթը» վեպում» թեմայով: Այժմ աշխատակցում է Ճապոնիայում ՀՀ դեսպանությունում: 2011-2013 թթ. Վատանաբեն ուսումնառությունը շարունակել է Հայաստանում: 2015-ին նրա ճապոներեն թարգմանությամբ լույս է տեսել ամերիկահայ պատմաբան Ջորջ Բուռնոլայանի «Հայ ժողովրդի համառոտ պատմություն» աշխատությունը:

³ Հոդված «Ճապոներեն նյութեր Դիանա Աբգարի մասին», հեղինակ Դայսակու Վատանաբե, «Ալգ» օրաթերթ, 01.12.2017 թ., <https://www.azg.am/AM/2017011324> (մուտք՝ 23.10.2020):

Эта блестяще мыслящая женщина неустанно боролась за справедливость для угнетенных как своими трудами, так и гуманитарными усилиями. Диана лично поддерживала сотни обездоленных беженцев из разваливающихся Османской и Российской империй после тяжелого путешествия через Сибирь в Японию. Она разместила, накормила и обеспечила документацией сотни обездоленных армян, спасшихся от геноцида, голода и большевистской революции, преодолела общественные табу и давление времени, чтобы стать уважаемым лидером в мире, где доминируют мужчины, поскольку она бросала вызов мотивам и решениям основных политических сил. Кульминационным моментом в карьере Дианы стало ее назначение «Почетным консулом в Японии» министром иностранных дел Армении Амо Оганджяном в 1920 году, что стало признанием ее уникальных достижений.

Ключевые слова: Диана Абгар, почетный консул, армянские иммигранты, Япония, гуманизм, геноцид, Григор Дзамоян, Армения, Эйити Шибусава, Токеи Мару.

Anna Vardanyan, DIANA ABGAR - "MOTHER OF ARMENIA IN THE FAR EAST": LIFE AND ACTIVITIES. TRACING BACK TO ARMENIAN-JAPANESE HISTORICAL AND CULTURAL RELATIONS. Diana Agabeg was born in Rangoon, Burma on October 17, 1859, the youngest of seven children, her father immigrated as a young boy from New Julfa, and her mother from Shiraz, Iran. Her parents were first generation Indian Armenians Diana's formal education was a convent school in Calcutta. Diana was fluent in Armenian, English and Hindi. In 1890, Diana Agabeg Abgar moved to Japan with her husband, and stayed there until her death. Lots of things changed for Diana, after the massacre of approximately 30,000 Armenians in 1909, in Adana, Turkey. She started to focus her energy outward, calling attention to the plight of the Armenians. She studied history and current affairs, and formulated a picture of the political powers of the time and their manipulations. This brilliant minded woman worked tirelessly for justice for the oppressed, both through her writings and humanitarian efforts. Diana personally supported hundreds of destitute refugees, from the crumbling Ottoman and Russian empires, after an arduous journey across Siberia to Japan. She housed, fed, and secured documentation for hundreds of destitute souls escaping genocide, starvation, and the Bolshevik revolution, overcame societal taboos and pressures of the time to become a respected leader in a male-dominated world, as she challenged the motives and decisions of major political powers. The culmination moment in Diana's career was her appointment as "Honorary Consul to Japan" from the Armenian foreign minister Hamo Ohanjanian in 1920, a unique recognition of her accomplishments.

Key words: Diana Abgar, honorary consul, Armenian immigrants, Japan, humanitarianism, genocide, Grigor Dzamoyan, Armenia, Eiichi Shibusawa, Tokei Maru.